



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

4 մարտի 2010 թվականի N 8

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. մարտի 11
Երևան



ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԴԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ

1. ՆՊԱՏԱԿԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները սահմանում են պահանջներ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության արդյունքում շրջանավարտների մոտ անձի պահանջներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կարողությունների ձևավորման նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ճնշող մեծամասնության գծով կրթությունն իրականացվում է ուսումնական պլաններով, որոնց հիմքում, ըստ էության, ընկած չեն պահանջներ՝ պատրաստվող մասնագետների կարողությունների (ինչ պետք է նրանք իմանան, ինչ հասկանան և ինչ կարողանան անել) նկատմամբ, որն առաջացնում է անհամապատասխանություն շրջանավարտների իրական մասնագիտական ունակությունների և դրանց նկատմամբ աշխատաշուկայի պահանջների միջև: Սա իր հերթին բերում է շրջանավարտների կրթության ցածր որակի և հետագա զբաղվածության ապահովման ցածր մակարդակի:

«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման հայեցակարգի» (այսուհետև՝ Հայեցակարգ) անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգի» 2009-2011թթ. միջոցառումների ծրագրով: Հայեցակարգի նպատակն է նախանշել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետև՝ ՄԿՈՒ) որակավորումների և մասնագիտությունների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները, որոնց սահմանումը և հետագա իրականացումը կնպաստի ՄԿՈՒ ոլորտի ուսումնական գործընթացի կանոնակարգման և, արդյունքում, կրթության որակի բարձրացմանը:

Սույն Հայեցակարգը ներառում է.

- ա) կարողությունների ձևավորմանը միտված (կարողութենամետ) կրթական չափորոշիչների (այսուհետև՝ չափորոշիչներ) առանձնահատկությունների ու գիտելիքների ձևավորմանը միտված չափորոշիչների նկատմամբ առավելությունների վերլուծությունը,
- բ) չափորոշիչների մշակման համար անհրաժեշտ նախապայմանները,

- զ) չափորոշիչների մշակման սկզբունքները,
- դ) չափորոշիչներ մշակող փորձագետների աշխատանքային խմբի կազմի ու դրա ձևավորման սկզբունքներն ու մեխանիզմները,
- ե) չափորոշիչների մշակման գործընթացի համար անհրաժեշտ գործողությունները, դրանց իրականացման մեխանիզմները,
- զ) չափորոշիչների նախագծերի փորձաքննության առավել արդյունավետ մեխանիզմներն ու գնահատման չափանիշները,
- է) չափորոշիչների ներդրման գործընթացի փուլերը, դրանց վերանայման անհրաժեշտության հիմնավորումները:

Հայեցակարգի մշակման համար օգտագործվել են համապատասխան միջազգային առաջավոր փորձը, ընդունված մոտեցումներն ու սկզբունքները, հաշվի են առնվել ՄԿՈՒ վերջին զարգացումները:

2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1. ԽՆՊԻ ԿԱՐԼՈՐՈՒՄՆԸ

Մասնագիտական կրթության որակն ապահովելու և աշխատաշուկայի կարիքները բավարարելու նպատակով ուսումնառության ողջ գործընթացը պետք է նպատակաուղղված լինի պատրաստվող մասնագետի մասնագիտական բնութագրի նկատմամբ նախապես սահմանված պահանջների բավարարմանը՝ որոշակի կրթական խնդիրներ լուծելու և կրթական նպատակների հասնելու միջոցով: Այդպիսի պահանջներ սահմանում են կրթական չափորոշիչները, որոնք թեև կարող են տարբեր բնույթ կամ կառուցվածք ունենալ, սակայն դրանց հիմնական նպատակն է սահմանել միասնական, կատարման համար պարտադիր պահանջներ՝ կրթության արդյունքի նկատմամբ, ուղենիշ ծառայել ողջ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման համար: Միաժամանակ, ինչպես ցույց է տալիս միջազգային առաջավոր փորձը, չափորոշիչը չպետք է կաշկանդի ո՛չ ուսումնական գործընթաց կազմակերպողին, ո՛չ էլ սովորողին դասավանդման կամ ուսումնառության եղանակների, ձևերի ու մեթոդների ընտրության, ուսումնական գործընթացի կազմակերպման տեսանկյունից: Սա մշանակում է, որ չափորոշիչները պետք է միտված լինեն կրթական արդյունքներին (շրջանավարտի կարողությունների ձևավորմանը), այլ ոչ թե ներդրումներին (ինչ գիտելիքներ հաղորդել սովորողին, ինչ ժամաքանակ ծախսել դրա վրա, ինչ ռեսուրսներ ներդնել և այլն): Վերջիններս պետք է բխեն չափորոշիչների պահանջներից և ուղղված լինեն դրանց առավել արդյունավետ ու արդյունավոր բավարարմանը:

Թեև վերջին շրջանում այս հարցում տեղի են ունեցել որոշակի դրական տեղաշարժեր՝ փոխվել է չափորոշիչների դերի ընկալումը, սկսվել է սովորողների մոտ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակումը՝ նոր ձևաչափով, ձևավորվել է որոշակի մտավոր ներուժ, սակայն դեռևս բացակայում են կարողութենամետ չափորոշիչների մշակման ու ներդրման միասնական ընդհանուր քաղաքականությունը, սկզբունքներն ու համակարգված մեխանիզմները: Այդ իսկ պատճառով կարևորվում է այս խնդիրների՝ լուծումներ առաջարկող հայեցակարգային փաստաթղթի մշակումն ու հաստատումը, որը հիմք կդառնա հետագայում Հայաստանում չափորոշիչների մշակման, ներդրման ու պարբերական վերանայման բնականոն գործընթացի համար:

2.2. ՄԿՈՒ չափորոշիչների սահմանումն ու բովանդակությունը

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ «կրթական չափորոշիչ» հասկացությունը օրենսդրորեն սահմանվել է 1999թ. ապրիլի 14-ին ընդունված «**Կրթության մասին**» ՀՀ օրենքով, որի 3-րդ հոդվածը տալիս է չափորոշիչի սահմանումը. «Պետական կրթական չափորոշիչ՝ նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների

ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները», իսկ 9-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմք են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատության կազմակերպական-իրավական ձևից»:

Ավելի ուշ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր 2001թ. հունվարի 16-ի N 24 որոշմամբ հաստատեց **միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչը**, որի 1-ին կետը սահմանում է.

«ա) միջին մասնագիտական կրթության ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը

բ) միջին մասնագիտական ուսումնական հաստատության սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը

գ) միջին մասնագիտական կրթության շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները»:

Այսպիսով, ո՛չ օրենքով, ո՛չ էլ ընդհանուր չափորոշչով սահմանված հատկանիշները ակնհայտորեն չեն սահմանում կրթական չափորոշիչի էությունը, մոտեցումները, դրանցով սահմանվող պահանջները: Վերը բերված կետերից առաջին երկուսը «ներդրումային» բնույթ են կրում, այսինքն նախատեսում են պահանջներ կրթական ներդրումների (ուսուցանվող նյութ և ժամաքանակ) նկատմամբ, իսկ երրորդը, թեև որոշակի հղում է կատարում արդյունքին՝ շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներին, սակայն չի բացահայտում, թե ինչի նկատմամբ պետք սահմանվեն պահանջներ, և չի անդրադառնում պատրաստվող մասնագետների մոտ կարողությունների ձևավորման պահանջին:

Այս խնդրում որոշակի հստակություն են մտցնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 13.05.2004թ. N 318-Ն հրամանով հաստատված **միջին և նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների բաղադրիչները**, որոնք սակայն զերծ չեն նույն ներդրումային մոտեցումից. առավել մեծ շեշտադրում է արվում մասնագետի պատրաստման ընթացքի (սկսած ընդունելությունից՝ մինչև նյութատեխնիկական ապահովում), այլ ոչ արդյունքների վրա:

Այսպիսի ներդրումային և գիտելիքների հաղորդմանն ուղղված մոտեցման թույլ կողմն այն է, որ ուսումնական գործընթացի անգամ կատարյալ կազմակերպման պարագայում երաշխավորված չէ վերջնական արդյունքի ապահովումը, այն է՝ սովորողի կողմից անհրաժեշտ նյութի յուրացումը, և հստակեցված չեն դրա ստուգման մեխանիզմները: Դեռ ավելին, նախատեսված նյութի անգամ լիովին յուրացումը դեռևս չի նշանակում ստացած գիտելիքների (տեղեկատվության) գործնական կիրառման կարողություն, որի անհրաժեշտությունն առաջանում է աշխատավայրում:

Այս խնդիրն իր լուծումը կարող է գտնել, եթե անդրադառնանք մասնագիտական կրթության հիմնական նպատակին, որն է՝ անձի պատրաստումը որոշակի մասնագիտության ու զբաղմունքի շրջանակներում կոնկրետ աշխատանքային խնդիրների լուծման համար:

ՄԿՈՒ յուրաքանչյուր մասնագիտության որակավորման դեպքում վերը նշված կրթական նպատակը պետք է մեկնաբանված ու ներկայացված (վերծանված) լինի որոշակի հատուկ պահանջների տեսքով: Այս պահանջներն ընդհանուր առմամբ պետք է վերաբերեն սովորողների գիտելիքներին, ունակություններին ու հմտություններին, ինչպես նաև մոտեցումներին, վերաբերմունքին, արժեքներին ու շարժառիթներին, որոնք պետք է ձևավորվեն ուսումնառության ընթացքում, և ծառայեն նրանց ոչ միայն մասնագիտական զարգացմանն ու առաջխաղացմանը, այլև առօրյա կյանքում ու հասարակության մեջ ակտիվ ու լիարժեք ընդգրկմանը (վերջինս արդեն վերաբերում է կրթության մեկ այլ նպատակի՝ «համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով

դաստիարակված անձի ձևավորմանը»): Պահանջներ պետք է սահմանվեն նաև կայունության և փոխանցելիության, ինչպես նաև ցկյանս կրթության համատեքստում կիրառելիության տեսանկյունից:

Կրթական չափորոշիչներն, այսպիսով, ծառայում են կրթական նպատակները կարողությունների նկատմամբ հստակ պահանջների տեսքով սահմանելուն: Չափորոշիչները նախատեսում են կարողություններ, որոնք սովորողները ձեռք են բերում, եթե ուսումնառության արդյունքները համարվում են ապահովված:

Կրթական չափորոշիչը, փաստորեն, որոշակի խնդիրների («ուսումնառության արդյունքներ») և ստուգման պահանջների («կատարման չափանիշներ») տեսքով ներկայացված՝ ուսումնական գործընթացից ակնկալվող արդյունքների ամբողջություն է:

2.3. Հայաստանի Հանրապետությունում չափորոշիչների մշակման գործընթացի առկա վիճակը

Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մշակման գործընթացն սկսվել է 2005թ., Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. օգոստոսի 14-ի N 1079-Ն որոշմամբ մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելուց հետո: Այն մասնավորապես սահմանում էր տարբեր կառույցների իրավասություններն այս գործընթացի տարբեր տարրերի (չափորոշիչի բաղադրիչների սահմանում, մասնագիտական խորհուրդների և աշխատանքային խմբերի ձևավորում, չափորոշիչի նախագծի մշակում, հաստատում) նկատմամբ:

2005-2007թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել է միջին մասնագիտական կրթության երկու տասնյակ չափորոշիչ, որոնց ցանկը բերված է ստորև ներկայացված աղյուսակում.

Ք/Ք	Ղախիչը	Մասնագիտությունը	Հրամանը
1	0402	Մանկաբարձական գործ	25.01.2005թ., N 23-Ն
2	0405	Դեղագործություն	25.01.2005թ., N 23-Ն
3	0406	Քույրական գործ	25.01.2005թ., N 23-Ն
	0407	Լաբորատոր ախտորոշում	25.01.2005թ., N 23-Ն
4	0410	Բուժական կոսմետոլոգիա	11.01.2006թ., N 08-Ա/Ք
5	0411	Բուժական մերսում	04.11.2006թ., N 481-Ա/Ք
6	0415	Քույրական գործի կազմակերպում	25.01.2005թ., N 23-Ն
7	0416	Ատամնատեխնիկական գործ	25.01.2005թ., N 23-Ն
8	0501	Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)	02.06.2005թ., N 294-Ն
9	0502	Երգեցողություն	02.06.2005թ., N 294
10	0503	Երգչախմբավարություն	02.06.2005թ., N 294
11	0504	Երաժշտության տեսություն	02.06.2005թ., N 294
12	0512	Գեղանկարչություն	10.08.2006թ., N 668-Ա/Ք
13	0513	Քանդակագործություն	10.08.2006թ., N 668-Ա/Ք
14	0514	Դիզայն (ըստ ճյուղերի)	10.08.2006թ., N 668-Ա/Ք
15	0515	Ձարդային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	10.08.2006թ., N 668-Ա/Ք
16	2710	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա	07.06.2007թ., N 550-Ա/Ք
17	2711	Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա	31.07.2007թ., N 700 -Ա/Ք
18	2808	Հագուստի մոդելավորում և նախագծում	16.04.2007թ., N 298-Ա/Ք
19	2809	Հագուստի պատրաստման տեխնոլոգիա	16.04.2007թ., N 298-Ա/Ք
20	2819	Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	16.04.2007թ., N 298-Ա/Ք

Այս չափորոշիչներից մի քանիսը (հատկապես առողջապահական մասնագիտություններին), թեև որոշակի հղումներ են կատարում շրջանավարտի կարողություններին, սակայն վերջիններս ներկայացված չեն ուսումնառության արդյունքների տեսքով, որոնք ենթակա կլինեին հստակ և օբյեկտիվ

ստուգման (օրինակ՝ «կարողանա իրագործել և փաստագրել քույրական գործընթացի առանձին փուլերը», «կարողանա գնահատել դեղորայքի ազդեցությունը յուրաքանչյուր հիվանդի վրա» և այլն): Բացի այդ, այս պահանջները բերված են՝ ըստ առարկաների, այլ ոչ թե՝ ըստ կարողությունների մոդուլների: Վերջիններս են, որ ապահովում են կրթության արդյունքի (ելքի) անմիջական համապատասխանությունը որևէ կոնկրետ աշխատավայրում՝ աշխատանքային դերի կամ զբաղմունքի շրջանակներում աշխատակցից պահանջվող կարողություններին, կամ այլ խոսքով ասած, այն, որ շրջանավարտն ունակ է հաջողությամբ կատարել տվյալ զբաղմունքի բնութագրով (մասնագիտական չափորոշչով) սահմանված պարտականությունները:

Բացի այդ, այս չափորոշիչները կառուցված են առարկաների կամ դասընթացների տեսանկյունից և խստորեն սահմանում են ոչ միայն դրանց ժամաքանակը, այլև թեմատիկ բովանդակությունը, այսինքն՝ կրկին հիմնված են ներդրումների վրա՝ միաժամանակ չսահմանելով հստակ արդյունքներ և դրանց ստուգման չափանիշներ:

Փաստորեն այս ձևաչափը ուսումնառության ընթացքում անհատի համար չի ապահովում կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորում և լիարժեք չի բավարարում մասնագետին ներկայացվող արդի պահանջները:

Սա էր պատճառը, որ անհրաժեշտություն առաջացավ վերանայել չափորոշիչների կառուցվածքը և ընդհանրապես մոտեցումը դրանցով սահմանվող պահանջների նկատմամբ, և 2009 թվականին մշակվեց նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչի նոր ձևաչափը, որը հաստատվեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 04.09.2009թ. N772-Ն հրամանով: Այն ամբողջովին միտված է սովորողների մոտ կարողությունների ձևավորմանը և կառուցված է մոդուլային սկզբունքով:

Արդեն իսկ այդ ձևաչափի համաձայն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒՋԱԿ) կողմից մշակվեցին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության 56 մասնագիտության պետական կրթական չափորոշիչներ, որոնք հետագայում հաստատվեցին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամաններով:

Չափորոշիչների մշակումն իրականացվեց 5-8 մարդուց կազմված աշխատանքային խմբերի կողմից: Այդ խմբերում ընդգրկվեցին տնտեսության համապատասխան ոլորտների կազմակերպություններում աշխատող մասնագետներ, գործատուներ, անհատ ձեռներեցներ, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Այս մասնագետներն անցան 15-օրյա (90 ժամ) համակարգված ուսուցում նախապես մշակված ծրագրով, որը ներառում էր թեմաներ՝ Հայաստանում գործող համապատասխան իրավական դաշտի, զբաղմունքների դասակարգչի ու մասնագիտական չափորոշիչների, կարողութենամետ կրթական չափորոշիչների դերի, նշանակության ու մշակման մեթոդաբանության, մոդուլային ուսումնական պլանների կազմման ու մոդուլային ուսուցման իրականացման, թիմային աշխատանքի և հաղորդակցման հմտությունների և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ բացակայում էին համապատասխան մասնագիտական չափորոշիչները՝ աշխատանքային խմբի անդամների առջև խնդիր դրվեց նույն հանձնառության շրջանակներում մշակել նաև համապատասխան զբաղմունքների բնութագրերը: Յուրաքանչյուր չափորոշիչի նախագիծ անցավ գործատուների կողմից առաջադրված անկախ մասնագետների փորձաքննություն, ինչը նպաստեց չափորոշիչների նախագծերի բարելավմանը և դրանցով՝ կարողությունների նկատմամբ սահմանված պահանջների ճշգրտմանն ու հստակեցմանը:

Չափորոշիչների մշակման աշխատանքների՝ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված ընթացիկ համակարգումը ապահովեց, որ դրանք ընթանան ճիշտ ուղղությամբ, ոչ միայն չչեղվեն սահմանված ժամանակացույցից, այլև պահպանվեն նախապես որդեգրված մոտեցումներն ու սահմանված պահանջները, երաշխավորվի դրանց կառուցվածքային և մեթոդաբանական միասնականությունը:

2.4. Չափորոշիչների մշակման և ներդրման ձեռքբերումներն ու առկա խնդիրները

Ներկայումս չափորոշիչների մշակման ու ներդրման գործընթացում արձանագրվել է որոշակի առաջընթաց, որի արդյունքներն են՝

- ա) մասամբ ձևավորված է չափորոշիչների մշակման իրավական դաշտը
- բ) մշակված ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված է նախնական և միջին մասնագիտական կրթության կարողությունների ձևավորմանը միտված կրթական չափորոշիչի ձևաչափը
- գ) մշակված է զբաղմունքի բնութագրի օրինակելի ձևաչափը
- դ) մշակված են մի շարք մասնագիտությունների կարողութենամետ չափորոշիչներ
- ե) ստեղծվել է չափորոշիչների մշակման գործընթացի կազմակերպման համար պատասխանատու կառույց՝ ՄԿՈՒԶԱԿ-ը
- զ) ստեղծվել է սոցիալական գործընկերության սկզբունքներին համաձայն գործող մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդը (ՄԿՈՒԶԱԽ), որի խնդիրներից է մասնագիտական կրթությամբ մասնագետներին ու դրանց պատրաստմանը ներկայացվող պահանջների, հետևաբար՝ նաև չափորոշիչների վերաբերյալ հարցերի քննարկումը
- է) համապատասխան ուսուցում է անցել շուրջ 100 մասնագետ, որի արդյունքում ձևավորվել են կարողութենամետ չափորոշիչների մշակման մեթոդաբանությանն ու գործիքակազմին տիրապետող մարդկային ռեսուրսներ
- ը) համագործակցություն է հաստատվել գործատուների և գործարարների հետ, որի արդյունքում չափորոշիչների մշակման գործում ընդգրկվել են անմիջականորեն արտադրությունում (կամ համապատասխան այլ կազմակերպություններում) աշխատող մասնագետներ, որն ապահովել է չափորոշիչների պահանջների առավել համապատասխանությունն աշխատաշուկայի իրական պահանջներին
- թ) մշակվել և փորձարկվել է չափորոշիչի փորձագիտական եզրակացության ձևաչափը
- ժ) տարածաշրջանային բազմագործառութային ՄԿՈՒ կենտրոնները ապահովվել են ժամանակակից ուսումնական գույքով ու սարքավորումներով, ինչը հնարավորություն կտա դրանց ապահովել կարողութենամետ չափորոշիչներով սահմանված պահանջները
- ժա) ստեղծվել է 13 ոլորտային հանձնաժողով, որոնք պատասխանատու են չափորոշիչների մասնագիտական փորձաքննությունն իրականացնելու և եզրակացություն տալու համար:

Միաժամանակ, դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են կարողութենամետ չափորոշիչների կանոնավոր մշակման ու ներդրման գործընթացին:

Դրանք են.

- ա) կրթական չափորոշիչի համապատասխան իրավական ակտերով տրված սահմանումներն ու բնութագրումները թերի են ու չեն բացահայտում դրանց իրական էությունը՝ արդի զարգացումների ու մոտեցումների տեսանկյունից, շեշտը դնում են կրթական ներդրումների, այլ ոչ արդյունքի վրա, չեն ապահովում աշխատաշուկայի պահանջներին

համապատասխանող կարողություններով օժտված մասնագետի պատրաստման նկատմամբ պահանջները

- բ) ապահովված չէ կրթական չափորոշիչների մշակման գլխավոր նախապայմաններից մեկը՝ զբաղմունքների բնութագրերի և (կամ) մասնագիտական չափորոշիչների առկայությունը, որի պատճառով դեռևս ճշգրտված ու աշխատաշուկայի իրական կառուցվածքին համապատասխանեցված չէ մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը
- գ) չափորոշիչների ձևավորման գործող կարգն արդյունավետ չէ և չի ապահովում տարբեր շահագրգիռ կողմերի բավարար ներգրավվածություն, մինչդեռ չափորոշիչների մշակման արդեն իսկ կիրառվող դրական փորձը ամրագրված չէ որևէ իրավական ակտով
- դ) չափորոշիչների հաստատված ձևաչափը, թեև լուրջ քայլ է կարողությունների ձևավորումը որպես առաջնահերթ սկզբունք ընդունելու ճանապարհին, սակայն ծանրաբեռնված է ավելորդ կարգավորիչ տարրերով և սահմանափակում է կրթություն իրականացնողի և ուսումնառողի նախատեսված արդյունքներին հասնելու ճանապարհի, եղանակի ու ձևի ընտրության ազատությունն ու ճկունությունը
- ե) թեև չափորոշիչների արդեն իսկ կիրառվող ձևաչափն ըստ էության հնարավորություն է տալիս ճանաչել անձի նախընթաց ուսումնառության արդյունքներն, անկախ դրա ձևից ու եղանակից, սակայն դեռևս կանոնակարգված չէ և հետևաբար չի կիրառվում առանց ֆորմալ կրթության մեջ ներգրավվելու որակավորում ստանալու մեխանիզմը
- զ) մեկ միասնական փաստաթղթով (կամ միասնական տրամաբանությամբ ենթարկվող փաստաթղթերի փաթեթով) կանոնակարգված չէ չափորոշիչների մշակման ու ներդրման գործընթացը, աշխատանքային խմբերի ձևավորումից ու դրանց անդամների վերապատրաստումից մինչև չափորոշիչների հաստատում ու փորձարկում:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Չափորոշիչների մշակման հիմնական սկզբունքները

Չափորոշիչի նպատակն է պահանջներ սահմանել կրթության արդյունքի՝ շրջանավարտների մոտ անձի պահանջմունքներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող կարողությունների ձևավորման նկատմամբ, ընդ որում, հաշվի առնելով ոչ միայն ներքին, այլև միջազգային աշխատաշուկայի ներկա պահանջներն ու ապագա զարգացումները: Չափորոշիչը կազմվում է մասնագիտական կարողություններին համապատասխան ուսումնառության արդյունքներ պարունակող մոդուլներից, պատրաստվող մասնագետի կարողությունների նկատմամբ աշխատաշուկայի պահանջների փոփոխության դեպքում չափորոշիչի պարբերական ու կանոնավոր, միաժամանակ դրա ընդհանուր կառուցվածքը չխաթարող վերանայման հնարավորությունն ապահովելու նպատակով: Հաշվի առնելով մշակման կազմակերպման ու համակարգման գործընթացը չափորոշիչների միասնական բնույթի պահպանման խիստ անհրաժեշտությունը, դրանց մշակման կազմակերպման ու համակարգման գործընթացն իրականացվում է կենտրոնացված կարգով, մեկ՝ առավել մասնագիտացված ու արհեստավարժ կառույցի կողմից (ներկայումս Հայաստանի Հանրապետությունում այդպիսի կառույց է ՄԿՈՒԶԱԿ-ը): Չափորոշիչները մշակվում, փորձաքննության են ենթարկվում և ներդրվում են շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ապահովող մասնակցային մոտեցման կիրառմամբ՝ ապահովելով սոցիալական գործընկերությունը ՄԿՈՒ ոլորտում: Մինչև վերջնական ներդրումը, տվյալ չափորոշիչը փորձնական ներդրվում է առանձին ուսումնական հաստատություններում

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև արդի միջազգային մոտեցումները, Հայաստանի Հանրապետությունում կուտակված համապատասխան փորձն ու առկա նախադրյալները՝ սահմանվում են չափորոշիչների մշակման ու ներդրման հետևյալ հիմնական սկզբունքները.

- ա) ժամանակակից անձի ու քաղաքացու ձևավորման, աշխատուժի վերարտադրության ու զարգացման, աշխատանքային շուկայում մրցունակության ապահովում,
- բ) չափորոշիչի բովանդակության համապատասխանության ապահովում տնտեսության և աշխատանքային շուկայի պահանջներին,
- գ) կրթական գործընթացի հաջորդայնության և շարունակականության ապահովում,
- դ) միջազգային կրթական համակարգում ինտեգրում,
- ե) սոցիալական գործընկերների հետ համագործակցություն,
- զ) աշխատանքային շուկայի և կրթության ոլորտի զարգացումներին համահունչ չափորոշիչների պարբերաբար վերանայում,
- է) չափորոշիչների մշակման կազմակերպման ու համակարգման գործընթացի միասնականություն,
- ը) ՄԿՌԻ շրջանավարտին չափորոշչով ներկայացվող պահանջների և չափանիշների գնահատման հստակ հնարավորություն
- թ) Չափորոշիչների կառուցվածքի և բովանդակության ճկունություն:

3.2. Չափորոշիչների մշակման նախապայմանները

ՄԿՌԻ հիմնական նպատակը պետք է լինի սովորողներին սահմանված պահանջներին համապատասխան աշխատելու կարողություններով օժտելը: Հասկանալի է, որ կրթական չափորոշիչները նույնպես պետք է ծառայեն այդ նպատակին և հիմնված լինեն տվյալ աշխատանքի (զբաղմունքի) նկատմամբ սահմանված պահանջների վրա: Վերջիններս սովորաբար սահմանվում են մասնագիտական չափորոշիչների կամ զբաղմունքի բնութագրի տեսքով, որպես զբաղմունքների դասակարգչի բաղկացուցիչ մաս: Մասնագիտական չափորոշիչները սահմանում են այն կարողությունները, որոնք կիրառվում են աշխատանքային դերերի կամ մասնագիտությունների նկատմամբ՝ կատարողականությունը, գիտելիքը և կարողությունը հաստատելու համար պահանջվող վկայության տեսքով: Դրանք ներառում են տվյալ մասնագիտության մեջ իրականացվող հիմնական գործողություններն այն բոլոր իրավիճակներում, որոնց կարող է հանդիպել աշխատողը:

Միաժամանակ, զբաղմունքների դասակարգիչը պետք է մշակվի աշխատաշուկայի ներկայիս և առնվազն մոտակա ապագայի պահանջների ուսումնասիրության արդյունքում և արտացոլի դրա իրական կառուցվածքը, թե՛ զբաղմունքների (մասնագիտությունների, պաշտոնների) ցանկի, թե՛ դրանցից յուրաքանչյուրի բնութագրի տեսանկյունից: Այս աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում մասամբ կատարված են. մշակվել և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 31.07.2009թ. N 632-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Ջբաղմունքների դասակարգիչը» ՀԴ - 2009:

Այնուամենայնիվ կարողութենամետ կրթական չափորոշիչի մշակման անհրաժեշտ նախապայման է յուրաքանչյուր աշխատանքային դերի՝ կարողությունների տեսանկյունից սահմանված հստակ ու մանրակրկիտ բնութագրերի առկայությունը: Վերջիններս Հայաստանի Հանրապետությունում կարող են կոչվել «մասնագիտական չափորոշիչ», «զբաղմունքի բնութագիր» կամ որևէ այլ կերպ՝ կախված այս ոլորտի պետական լիազորված մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության որդեգրած մոտեցումներից, սակայն որակյալ կրթական չափորոշիչի մշակման լիարժեք հիմք ծառայելու

համար պետք է հստակորեն սահմանվեն այն կարողությունները, որոնց ձևավորմանը միտված կլինեն չափորոշիչները:

Մեկ այլ կարևոր նախապայման է չափորոշիչների մշակման ու ներդրման աշխատանքների նկատմամբ ոլորտին առնչվող կողմերի հնարավոր լայն շրջանակի շահագրգռվածության բարձրացումը, նրանց համախմբումն ու համագործակցության հաստատումը: Սա կարող է իրականացվել ՄԿՈՒՁԱԽ-ի միջոցով, սոցիալական գործընկերներից յուրաքանչյուրի դերի սահմանման և ակնկալվող արդյունքների տեսանկյունից նրանց համար շահավետության պարզաբանման միջոցով: Արդյունքում կապահովվի ոչ միայն մասնակցային մոտեցումը, այլև չափորոշիչների մշակման ու ներդրման ավելի բարձր արդյունավետությունն ու արդյունավորությունը, դրանցով սահմանվող պահանջների առավել համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին:

Ոչ պակաս կարևոր նախապայման է համապատասխան կարողություններով օժտված՝ որակյալ մարդկային ռեսուրսների ձևավորումը: Սրանց թվին են պատկանում չափորոշիչներ մշակողներն ու փորձաքննություն անցկացնողները, նրանց ուսուցումն իրականացնողները, և վերջապես չափորոշիչները գործնականում կիրառողները, այն է՝ ուսումնական հաստատությունների համապատասխան ղեկավար ու դասավանդող անձնակազմը: Մարդկային ռեսուրսների ձևավորումն ու զարգացումը պետք է անընդհատ ու կանոնավոր բնույթ կրի, լինի նախապես պլանավորված և ապահովված անհրաժեշտ ֆինանսական միջոցներով:

Եվ, ի վերջո, որպես նախապայման պետք է ընդունվի չափորոշիչների մշակման ու ներդրման միասնական ու արդի մոտեցումների կիրառումն ապահովող իրավական դաշտի ձևավորումը, որը կկանոնակարգի ինչպես համապատասխան կողմերի ու կառույցների իրավասությունները, այնպես էլ հստակ պահանջներ կսահմանի գործընթացի տարբեր բաղադրիչների (սկզբունքներ, մեթոդաբանական մոտեցումներ, ձևաչափեր և այլն) նկատմամբ:

3.3. Չափորոշիչների մշակման ու վերանայման պարբերաշրջանը

Չափորոշիչների մշակումն ու ներդրումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդական փուլերն ընդգրկող պարբերաշրջանով՝

- ա) մասնագիտության (որակավորման) ընտրություն, որի համար մշակվելու է կրթական չափորոշիչը,
- բ) չափորոշիչների մշակման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում,
- գ) չափորոշիչը մշակող աշխատանքային խմբի ձևավորում,
- դ) աշխատանքային խմբի անդամների ուսուցում,
- ե) աշխատանքային խմբի անդամների հետ պայմանագրերի կնքում,
- զ) չափորոշիչի նախագծի մշակում,
- է) չափորոշիչի նախագծի փորձաքննություն և դրա արդյունքներով վերջնամշակում,
- ը) չափորոշիչի հաստատում,
- թ) չափորոշիչի փորձարկում, որը ներառում է՝
 - չափորոշիչի պահանջների համաձայն ուսումնական պլանի, ըստ մոդուլների՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման նյութերի և ծրագրերի մշակում.
 - վերոնշյալ ուսումնաճորագրային փաստաթղթերի համաձայն՝ առնվազն մեկ ամբողջական պարբերաշրջանով (մինչև առաջին շրջանավարտումը) ուսուցման իրականացում.
 - արդյունքների գնահատում,

ժ) փորձարկման արդյունքների հիման վրա չափորոշի վերանայում ու լրամշակում, ուսումնաժողովին փաստաթղթերի կատարելագործում,

ժա) չափորոշի պարբերական վերանայում՝ համապատասխան որակավորմամբ մասնագետի նկատմամբ աշխատաշուկայի պահանջների փոփոխությունների համաձայն:

Անհրաժեշտ է, որ վերը նշված բոլոր փուլերն իրականացվեն որոշակի կանոնակարգված եղանակով, իսկ դրանց կատարման պատասխանատվությունը հստակ բաշխված լինի համապատասխան կառույցների միջև:

4. ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

4.1. Մշակման ենթակա չափորոշիչների ընտրությունը

Հաշվի առնելով, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մշակված են խիստ սահմանափակ թվով չափորոշիչներ, և իրատեսական չէ, որ առկա ռեսուրսները հնարավորություն կընձեռեն բոլոր անհրաժեշտ չափորոշիչների մշակումն իրականացնել զուգահեռաբար, խնդիր է առաջանում ընտրել այն որակավորումները (մասնագիտությունները), որոնց կարողութենամետ կրթական չափորոշիչների մշակումը գերակա է: Քանի որ ՄԿՈՒ համակարգում դասավանդվող մասնագիտությունները դժվար է օբյեկտիվորեն դասակարգել ըստ «կարևորության», ընտրության հիմնական չափանիշ պետք է ընդունվի չափորոշիչի մշակման հրատապությունը, որն ուղիղ համեմատական է տվյալ որակավորմամբ մասնագետների աշխատաշուկայում պահանջարկված լինելու աստիճանին (քանակական չափանիշ) և հակադարձ համեմատական է տվյալ մասնագիտության ՄԿՈՒ հաստատությունների վերջին 3-5 տարիների շրջանավարտների մասնագիտական կարողություններով գործատուների բավարարվածության աստիճանին (որակական չափանիշ): Երկրորդ չափանիշը, սակայն, նույնպես կարող է գնահատվել թվային արտահայտմամբ, վերը նշված ժամանակահատվածում շրջանավարտների՝ ըստ մասնագիտության աշխատանքի տեղավորման ցուցանիշներով:

Առավել արդարացված է, որ որակավորումները, որոնց գծով անհրաժեշտ է մշակել չափորոշիչներ, համապատասխան հիմնավորումներով առաջադրեն ոլորտային հանձնաժողովները, իսկ հավանություն տա՝ ՄԿՈՒԶԱԽ-ը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը կվերապահվի տվյալ ծրագրի շրջանակներում մշակվելիք չափորոշիչների ցանկի վերջնական հաստատման իրավասությունը:

4.2. Չափորոշիչներ մշակողները

Կարողութենամետ կրթական չափորոշիչները մշակվում են հատուկ այդ նպատակով ստեղծվող աշխատանքային խմբերի կողմից:

Նախապես սահմանվում է չափորոշիչների մշակման աշխատանքների տեխնիկական առաջադրանքը, որը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը՝

- ա) ծրագրի (աշխատանքների) անվանումը,
- բ) հիմնախնդիրը (հակիրճ ներկայացվում է տվյալ խնդրի հետ կապված առկա իրավիճակը, աշխատանքի կատարման անհրաժեշտության հիմնավորումը),
- գ) հանձնառության նպատակը և աշխատանքի բնույթը (հստակ ներկայացվում է, թե ինչ նպատակով է կատարվելու տվյալ հանձնառությունը, և ընդհանուր գծերով նկարագրվում է, թե ինչ տիպի աշխատանք(ներ) է իրականացնելու կատարող անձը կամ անձինք),
- դ) աշխատանքի նկարագիրը (հստակ ներկայացվում են հանձնառության շրջանակներում կատարվելիք բոլոր գործողությունները),

- ե) ակնկալվող արդյունքները (հստակ սահմանվում է, թե ի՞նչ արդյունքներ պետք է ներկայացնի կատարողը (կատարողները) և ի՞նչ տեսքով: Ընդհանուր առմամբ պետք է էլեկտրոնային կրիչով և թղթային տարբերակով ներկայացվի չափորոշիչի նախագիծը՝ մշակված սահմանված պահանջներին ու ձևաչափին համապատասխան: Օրինակների քանակը կարող է սահմանվել՝ ըստ նպատակահարմարության, ելնելով տվյալ հանձնառության առանձնահատկություններից),
- զ) պահանջվող որակավորումները (սահմանվում են պահանջներ կատարող(ներ)ի կրթության, որոշակի խնդիրների կամ ոլորտի մասին տեղեկացվածության մակարդակի, փորձառության, անձնական ու մասնագիտական հատկանիշների ու հմտությունների վերաբերյալ),
- է) աշխատանքների կատարման ժամկետը,
- ը) աշխատանքի արժեքը:

Աշխատանքային խմբի անդամների հավաքագրումն իրականացվում է մրցութային հիմունքներով: Մրցութային անաչառության ու թափանցիկության ապահովման նպատակով անհրաժեշտ է, որ նախապես մշակված ու հաստատված լինի մրցութային անցկացման կանոնակարգը:

Աշխատանքային խմբի առավել օպտիմալ կազմն է 5-7 հոգի: Այս թվաքանակը հիմնավորված է ինչպես կազմակերպչական ու կառավարման արդյունավետության պահանջով, այնպես էլ անդամների համապատասխան ներկայացուցչություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Աշխատանքային խմբի օրինակելի՝ 7 հոգուց բաղկացած կազմ՝

- ա) մասնագիտության (որակավորման) բնույթին համապատասխանող կազմակերպության՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող ներկայացուցիչ (տնօրեն, տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ և այլն): Նպատակահարմար է, որ հենց այս անձը ղեկավարի աշխատանքային խումբը՝ հաշվի առնելով նրա վարչական ունակությունները.
- բ) մասնագիտության (որակավորման) բնույթին համապատասխանող (հնարավորության դեպքում՝ ո՛չ նախորդ կետի համաձայն ներկայացված) կազմակերպության՝ մշակվող չափորոշիչով պատրաստվող մասնագետի ենթադրական պաշտոնի նկատմամբ մեկ-երկու աստիճան ավելի բարձր պաշտոն զբաղեցնող ներկայացուցիչ (օրինակ՝ արտադրության պետ, կազմակերպության ստորաբաժանման ղեկավար և այլն).
- գ) մշակվող չափորոշիչի որակավորմանը համապատասխան պաշտոն զբաղեցնող (հնարավորության դեպքում՝ ո՛չ նախորդ երկու կետերի համաձայն ներկայացված) կազմակերպության ներկայացուցիչ կամ համապատասխան անհատ ձեռներեց.
- դ) մասնագիտության (որակավորման) բնույթին համապատասխանող նախնական կամ միջին մասնագիտական (ըստ մշակվող չափորոշիչի) ուսումնական հաստատության տնօրեն կամ ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ.
- ե) մասնագիտության (որակավորման) բնույթին համապատասխանող (հնարավորության դեպքում՝ ոչ նախորդ կետի համաձայն ներկայացված) նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության դասավանդող (դասախոս, դասատու կամ արտադրական ուսուցման վարպետ).
- զ) մասնագիտության (որակավորման) բնույթին համապատասխանող գիտական, հետազոտական կամ բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացուցիչ.
- է) չափորոշիչի մշակման խորհրդատու:

Խմբի թվական կազմը կարող է պայմանավորված լինել ինչպես տվյալ չափորոշիչի մշակման բարդությամբ, այնպես էլ ֆինանսական ու ժամանակային ռեսուրսների մատչելիությամբ: Աշխատանքային խմբի նվազագույն թվաքանակի՝ 5 հոգու դեպքում առավել նպատակահարմար է

ընդգրկել «ա», «զ», «դ», «ե» և «է», իսկ 6 հոգու դեպքում՝ նաև «զ» կետերով նախատեսված անդամներին:

Անհրաժեշտ է, որ «ա» և «բ» կետերով նախատեսված անդամներն անմիջական մասնագիտական ու աշխատանքային առնչություն ունենան պատրաստվող մասնագետի կողմից կատարվող գործառնությունների հետ, հստակ պատկերացում կազմեն նրա աշխատանքային պարտականությունների և կատարողականության չափանիշների մասին: «զ» կետով նախատեսված անդամը պետք է տիրապետի արտադրությունում (կամ համապատասխան այլ ոլորտում)՝ պատրաստվող մասնագետի որակավորմանը համապատասխանող պաշտոնի (զբաղմունքի) շրջանակներում իրականացվող տեխնոլոգիական և այլ աշխատանքային գործընթացներին:

«է» կետով նախատեսված անդամն ընտրվում է նախապես ձևավորված մասնագիտական խմբից, որոնց անդամները հատուկ ուսուցման կամ սեփական փորձառության արդյունքում խորապես տիրապետում են չափորոշիչների մշակման տեխնիկային և կարող են համակարգել այդ գործընթացը, անկախ մշակվող չափորոշիչի մասնագիտական բնագավառից: Այս անդամի դերն առանձնահատուկ է. նա ուղղորդում է աշխատանքային խմբի մյուս անդամների աշխատանքները և ապահովում, որ չափորոշիչի մշակման գործը, դրա ողջ ընթացքում, շարժվի անհրաժեշտ ուղղությամբ, պահպանվեն չափորոշիչներին ներկայացվող պահանջներն ու կիրառվի ընդունված մեթոդաբանությունը, և աշխատանքների ավարտին նվազագույնի հասցված լինեն անցանկալի շեղումներ:

4.3. Չափորոշիչներ մշակողների վերապատրաստումը

Եթե աշխատանքային խմբի անդամները նախկինում ընդգրկված չեն եղել չափորոշիչների մշակման գործում, ապա, անկախ նրանց մասնագիտական որակավորման աստիճանից ու աշխատանքային փորձից, անհրաժեշտ է, որ նրանք նախապես անցնեն համապատասխան ուսուցում:

Ուսուցման ավարտին աշխատանքային խմբի անդամը պետք է՝

- ա) իմանա Չայաստանում չափորոշիչների հետ կապված խնդիրները կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները, հասկանա չափորոշիչ կարևորությունը, դրա կապն աշխատաշուկայի հետ, դրանց փոխադարձ ազդեցությունը.
- բ) ընդհանուր տեղեկություններ ունենա մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերի, զբաղմունքների դասակարգչի, որակավորումների շրջանակների մասին.
- գ) իմանա կրթական չափորոշիչի բոլոր բաղադրիչները, հասկանա դրանցից յուրաքանչյուրի մշանակությունը.
- դ) իմանա չափորոշիչների մշակման ու ներդրման սկզբունքները, անհրաժեշտ նախադրյալները, չափորոշիչների մշակման ու վերանայման պարբերաշրջանը.
- ե) կարողանա զբաղմունքի բնութագրով սահմանված կարողությունները փոխակերպել ուսումնառության արդյունքների.
- զ) իմանա մոդուլային ուսուցման հիմնական առանձնահատկությունները.
- է) կարողանա մշակել չափորոշիչների մոդուլները՝ դրանց բոլոր բաղկացուցիչ մասերը, ընդհանրացնել մոդուլները մեկ չափորոշիչի մեջ.
- ը) կարողանա մշակել օրինակելի ուսումնական պլան:

Ուսուցման դասընթացները կազմակերպվում են Կրթության ազգային ինստիտուտի կողմից, որը և ընտրում է դասավանդողներին՝ տվյալ բնագավառում առավել մեծ փորձ ու կարողություններ ունեցող փորձագետների:

4.4. Չափորոշիչների մշակման գործընթացը

Չափորոշիչների մշակման համար աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվում է նաև աշխատանքի կատարման ժամկետը, այդ թվում՝ չափորոշիչի նախագծի փորձաքննության արդյունքում անհրաժեշտ լրամշակումների կատարման աշխատաժամանակը: Ժամկետը որոշվում է բանակցությունների արդյունքում:

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի անդամների կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ աշխատանքների ընթացքի մասին:

Աշխատանքների ավարտին աշխատանքային խումբը ներկայացնում է ամփոփիչ հաշվետվություն, որին կցվում է մշակված չափորոշիչի նախագիծը՝ տեխնիկական առաջադրանքով սահմանված պայմաններին համապատասխան:

4.5. Չափորոշիչների նախագծերի փորձաքննությունը

Աշխատանքային խմբերի մշակած չափորոշիչների նախագծերը փորձաքննության առաջին՝ տեխնիկական փուլն անցնում են ՄԿՈՒԶԱԿ-ում, սահմանված ձևաչափին, ընդունված սկզբունքներին ու այլ մեթոդաբանական պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Տեխնիկական անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում չափորոշիչի նախագիծը վերադարձնում է աշխատանքային խմբին՝ նկատված թերություններն առավելագույնս մեկ շաբաթվա ընթացքում վերացնելու պահանջով:

Փորձաքննության երկրորդ՝ մասնագիտական փուլը վերաբերում է չափորոշիչի նախագծի մասնագիտական բովանդակությանը: Այդ նպատակով չափորոշիչի նախագիծը ՄԿՈՒԶԱԿ-ը տրամադրում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից ձևավորված համապատասխան ոլորտային հանձնաժողովին: Վերջինս կազմակերպում է չափորոշիչի նախագծի մասնագիտական փորձաքննություն, այդ գործընթացում ներգրավվելով առնվազն երեք անկախ մասնագետի (գրախոսողի): Այդ մասնագետները պետք է ընտրված լինեն տարբեր շահագրգիռ կողմերից՝ գործատուների միություններից, արհմիությունների կոնֆեդերացիայից, ուսումնական և գիտական հաստատություններից, այլ կազմակերպություններից: Մասնագիտական փորձաքննության դրական եզրակացությունների հիման վրա ոլորտային հանձնաժողովը հավանություն է տալիս չափորոշիչի նախագծին, և այն վերադարձնում է ՄԿՈՒԶԱԿ-ին: Մասնագիտական փորձաքննության եզրակացություններում դիտողությունների կամ առաջարկությունների առկայության դեպքում չափորոշիչի նախագիծը ՄԿՈՒԶԱԿ-ի միջոցով տրամադրվում է աշխատանքային խմբին, որը սահմանված ժամկետում պետք է լրամշակի չափորոշիչի նախագիծը՝ կատարելով համապատասխան շտկումներ, կամ ներկայացնի դրանք (դրանցից որևէ մեկը) չընդունելու հիմնավորում: Չափորոշիչի լրամշակված նախագիծը կրկին տրամադրվում է ոլորտային հանձնաժողովին՝ նրա կողմից հավանության արժանանալու նպատակով:

Ոլորտային հանձնաժողովի հավանությանն արժանացած չափորոշիչի վերաբերյալ ՄԿՈՒԶԱԿ-ը կազմում է փորձագիտական եզրակացություն, որը տրամադրում է Կրթության ազգային ինստիտուտին, իսկ վերջինս էլ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

4.6. Չափորոշիչների հաստատումը

Չափորոշիչի նախագծին ոլորտային հանձնաժողովի կողմից տրված հավանության հիման վրա ՄԿՈՒԶԱԿ-ի փորձագիտական եզրակացությունը պետք է բավարար հիմք հանդիսանա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հրամանով տվյալ չափորոշիչը հաստատելու համար: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության

նախարարը կարող է հանձնարարել Կրթության ազգային ինստիտուտին կազմակերպել չափորոշիչ նախագծի լրացուցիչ, այդ թվում՝ միջազգային փորձաքննություն:

4.7. Չափորոշիչների փորձարկումն ու լրամշակումը

Առաջին անգամ մշակված ու հաստատված չափորոշիչը պետք է փորձարկվի ուսումնառության առնվազն մեկ պարբերաշրջանի ընթացքում: Փորձարկվող չափորոշիչի համար ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից պետք է մշակվի անհրաժեշտ ուսումնաժողովային փաստաթղթերի ողջ փաթեթը՝ ուսումնական պլանը, ըստ մոդուլների՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման նյութերը, առարկաների ծրագրերը: Հաշվի առնելով, որ սկզբնական շրջանում ուսումնական հաստատությունների մեծ մասում համապատասխան փորձի պակաս կզգացվի, կարևոր է, որ Կրթության ազգային ինստիտուտը մեթոդական աջակցություն ցուցաբերի այս գործում: Այնուամենայնիվ, մեկից ավելի ուսումնական հաստատություններում նույն չափորոշիչի փորձարկման դեպքում այդ հաստատություններին պետք է որոշակի ազատություն տրվի ուսումնաժողովային փաստաթղթերը մշակել տեղի առանձնահատկությունների հաշվառմամբ, ինչը կապահովի փորձարկման արդյունքների առավել օբյեկտիվ գնահատումը՝ համեմատական վերլուծության հիման վրա:

Փորձարկման ընթացքում ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր կիսամյակը առնվազն մեկ անգամ, ինչպես նաև ուսումնառության պարբերաշրջանի ավարտին պետք է Կրթության ազգային ինստիտուտ ներկայացնի վերլուծական հաշվետվություն, որում նշված կլինեն համապատասխան եզրակացությունները, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև առաջարկություններ՝ չափորոշիչում փոփոխություններ կատարելու մասին: Միաժամանակ, համապատասխան եզրակացություններով ու առաջարկություններով պետք է հանդես գան նաև ոլորտային հանձնաժողովները, գործատուների (գործարարների) և արհմիությունների ներկայացուցիչները: Այս խնդիրն անհրաժեշտ է դարձնել ՄԿՈՒՁԱԽ-ի քննարկման ու որոշման առարկա՝ բոլոր կողմերի համաձայնությունն ու աջակցությունը ստանալու համար:

Բոլոր կողմերի եզրակացություններն ու առաջարկությունները ստանալուց հետո Կրթության ազգային ինստիտուտը կվերլուծի դրանք ու համապատասխան ոլորտային հանձնաժողովին կներկայացնի ամփոփ առաջարկություն տվյալ չափորոշիչի անհրաժեշտ լրամշակումների (կամ այն անփոփոխ թողնելու) վերաբերյալ: Ապա կգործի նույն ընթացակարգը, ինչպես չափորոշիչի հաստատման դեպքում:

4.8. Չափորոշիչների վերանայումը

Չափորոշիչի պարբերական վերանայման անհրաժեշտությունը պայմանավորվում է տեխնոլոգիաների, ընթացակարգերի, աշխատանքային պայմանների ու պահանջների, այլ հանգամանքների ու իրավիճակների փոփոխության հետևանքով աշխատաշուկայում նոր պահանջների առաջացմամբ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ չափորոշիչների վերանայման անհրաժեշտություն սովորաբար առաջանում է 3-5 տարին մեկ անգամ, սակայն հարկ եղած դեպքում այս գործընթացը կարող է իրականացվել նաև ավելի հաճախ:

Առավել օպտիմալ տարբերակ է, երբ սահմանվում է պարտադիր վերանայման ժամկետը (օրինակ՝ 3 տարին մեկ), որի ավարտին գործող չափորոշիչը պետք է դրվի ոլորտային հանձնաժողովի քննարկման՝ դրանում փոփոխություններ կատարելու կամ անփոփոխ թողնելու վերաբերյալ հարցը դիտարկելու ու եզրակացություն մշակելու նպատակով: Միաժամանակ, այդ հանձնաժողովին իրավունք է վերապահվում սեփական նախաձեռնությամբ արտահերթ կերպով հանդես գալ փոփոխությունների անհրաժեշտության մասին առաջարկով: Այս եզրակացությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը կայացնում է համապատասխան որոշում, նախապես քննարկելով այն ՄԿՈՒՁԱԽ-ում:

5. ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ՆԵՐՂՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ

ՄԿՈՒ համակարգում չափորոշիչների ներդրումը ժամանակատար ու ռեսուրսատար գործընթաց է: Որակյալ չափորոշիչների մշակումն ինքնին դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է, որ համակարգը, առաջին հերթին ուսումնական հաստատությունները, պատրաստ լինեն կազմակերպել ու իրականացնել ուսումնական գործընթացն այդ չափորոշիչների պահանջներին համապատասխան: Այս տեսանկյունից երկու հիմնական գործոններն են մարդկային ռեսուրսները (ղեկավար, դասավանդող ու օժանդակ անձնակազմերի պատրաստվածությունը) և ուսումնանյութական անհրաժեշտ ապահովվածությունը: Այս խնդիրների լուծումը նույնպես պահանջում է զգալի նյութական ներդրումներ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ առկա է չափորոշիչներով ուսուցում իրականացնելու որոշակի փորձ, հաստատությունների համապատասխան աշխատակիցների վերապատրաստումները հնարավոր է (ու անհրաժեշտ) սկսել չափորոշիչների մշակմանը զուգընթաց՝ վերջիններիս հաստատումից հետո դրանք անմիջապես ուսումնական գործընթացում ներդնելու համար:

Ինչ վերաբերում է ուսումնական հաստատությունների ուսումնանյութական հենքին, ապա դա չափորոշիչների ներդրման գլխավոր նախապայմաններից է, և առանց դրա ապահովման չափորոշիչը կարող է կորցնել իր արդիականությունը՝ մինչև ներդրվելը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում չափորոշիչների մշակման ու ներդրման նպատակն է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներին աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով օժտելը և որպես արդյունք՝ նրանց զբաղվածության մակարդակի բարձրացումն ու երկրի տնտեսության զարգացումը:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- ա) Հայաստանի Հանրապետությունում ՄԿՈՒ չափորոշիչների մշակման ու ներդրման արդի մոտեցումների կիրառումը երաշխավորող միասնական իրավական դաշտի ապահովում.
- բ) չափորոշիչների կանոնավոր մշակման գործընթացի ձեռնարկում.
- գ) չափորոշիչների ներդրում, փորձարկում և վերանայում:

Սույն խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել գործողությունների պլան՝ ըստ դրանց վերջնական և ուղղակի արդյունքների:

ՑԱՆԿ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ՝ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Խնդիր 1. Հայաստանի Հանրապետությունում ՄԿՈՒ չափորոշիչների մշակման ու ներդրման արդի մոտեցումների կիրառումը երաշխավորող՝ միասնական իրավական դաշտի ապահովում.

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր (↓) և ենթադրություններ (↑)
Վերջնական արդյունքներ.			
1. Չափորոշիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ճանաչված է որպես կրթության կառավարման և որակի ապահովման առանցքային գործիք, տրված է դրա արդիական ու միջազգային մոտեցումներին համապատասխանող սահմանումը:	Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության արդյունքների՝ չափորոշիչներով սահմանված պահանջների համապատասխանության օրենսդրական պահանջ	– Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած օրենքներ	
2. Կանոնակարգված է չափորոշիչների մշակման ու ներդրման ողջ գործընթացը, հստակորեն բաշխված են սոցիալական գործընկերության երեք կողմերը ներկայացնող բոլոր դերակատարների իրավասությունները:	Գործընթացի կարգավորվածություն իրավական ակտերով	– Կարողութեամետ չափորոշիչների մշակման ու ներդրման գործընթացը կարգավորող իրավական ակտեր	
3. Իրավական ակտերով ամրագրված է չափորոշիչների մշակման ու ներդրման համար պահանջվող մարդկային ռեսուրսների զարգացման անհրաժեշտությունը, սահմանված են համապատասխան ընթացակարգերը:	Մարդկային ռեսուրսների կանոնավոր զարգացումը Հայաստանի Հանրապետությունում դարձել է պարտադիր պահանջ	– Համապատասխան իրավական ակտերի պահանջների կատարման ապացույցներ	
Ուղղակի արդյունքներ.			
1.1. «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարված են անհրաժեշտ փոփոխություններ ու	Օրենքների համապատասխան հողվածներում կատարված լրացումներ ու փոփոխություններ	– ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համապատասխան օրենքներ	↑ Սահմանված են Որակավորումների հայաստանյան շրջանակի մակարդակները և դրանց ընդհանուր

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր (↓) և ենթադրություններ (↑)
լրացումներ՝ չափորոշի սահմանումների, դրանց բովանդակության և պահանջների վերաբերյալ:			բնութագրիչները:
2.1. Հաստատված է չափորոշիչների նախագծերի մշակման վերանայված կարգը	Առկա է չափորոշիչների նախագծերի մշակման նոր կարգ	– ՀՀ կառավարության որոշում	↓ Շահագրգիռ նախարարությունների և այլ կողմերի հետ համաձայնեցման խոչընդոտներ
2.2. Կրթության ազգային ինստիտուտի ՄԿՈՒՋԱԿ-ն օժտված է համապատասխան լիազորություններով	Համապատասխան լրացումներ և փոփոխություններ ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ-ի կանոնադրության մեջ	– Համապատասխան մարմնի որոշում	
2.3. Մշակված ու հաստատված են չափորոշիչի մշակման մեթոդական ցուցումները՝ որպես պարտադիր կատարման պահանջներ պարունակող փաստաթուղթ	Ներդրված է չափորոշիչի մշակման մեթոդաբանությունը	– ՄԿՈՒՋԱԿ-ի որոշում – ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↓ ՄԿՈՒՋԱԿ-ի կողմից մեթոդական ցուցումների քննարկման և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի ընդունման ձգձգումներ. ↑ Ցուցումները մշակող համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
2.4. Հաստատված են չափորոշիչի նախագծի փորձաքննության իրականացման մեթոդական ցուցումները և փորձագիտական եզրակացության ձևաչափը	Ներդրված են չափորոշիչի նախագծի փորձաքննության մեթոդաբանությունը ու եզրակացության ձևաչափը	– ՄԿՈՒՋԱԿ-ի որոշում – ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↓ ՄԿՈՒՋԱԿ-ի կողմից մեթոդական ցուցումների քննարկման և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի ընդունման ձգձգումներ. ↑ Ցուցումները մշակող համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
2.5. Հաստատված է չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգը	Ներդրված է չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգը:	– ՄԿՈՒՋԱԿ-ի որոշում – ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↓ ՄԿՈՒՋԱԿ-ի կողմից մեթոդական ցուցումների քննարկման և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի ընդունման ձգձգումներ. ↑ Կարգը մշակող

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր (↓) և ենթադրություններ (↑)
			համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
3.1. Համապատասխան իրավական ակտերում ամրագրված է ՄԿՈՒ չափորոշիչների մշակման ու ներդրման համար պահանջվող մարդկային ռեսուրսների շարունակական զարգացման սկզբունքը	Համապատասխան իրավական ակտերում կատարված լրացումներ ու փոփոխություններ:	- Համապատասխան մարմինների որոշումներ	↓ Խնդրի կարևորության ոչ բավարար ընկալում համապատասխան որոշումներ ընդունող մարմինների կողմից
3.2. Հաստատված է չափորոշիչներ մշակողների և հաստատությունների անձնակազմի համապատասխան անդամների վերապատրաստման ընթացակարգերը	Վերապատրաստման դասընթացի կազմակերպման և իրականացման կարգի առկայություն	- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↑ Կարգը մշակող համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Պատասխանատուն	Կատարման ժամկետը	Ռեսուրսները
1. «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման արդյունքում շնորհվող որակավորումների չափորոշիչների մշակման ու ներդրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. օգոստոսի 14-ի «Մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման, ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 16-ի «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» N 24 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծերի մշակում	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
2. Նախագծերի քննարկում ՄԿՈՒԶԱԽ-ի նիստում	ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԽ	2010թ. ընթացքում	ՄԿՈՒԶԱԽ-ի նիստի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ
3. Նախագծերի համաձայնեցում շահագրգիռ նախարարությունների հետ	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
4. Նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
5. Նախագծերի ներկայացում ՀՀ ԱԺ	ՀՀ կառավարություն	2010թ. ընթացքում	-
6. Կարողութենամետ չափորոշիչների մշակման կարգի վերանայում	ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ	2010թ.	-

	ՄԿՈՒԶԱԿ	ընթացքում	
7. Վերանայված կարգի նախագծի քննարկում ՄԿՈՒԶԱԿ-ի նիստում	ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	ՄԿՈՒԶԱԿ-ի նիստի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ
8. Կարգի հաստատման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի համաձայնեցում շահագրգիռ նախարարությունների հետ	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
9. Կարգի հաստատման մասին որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
10. Կառավարության որոշման համաձայն՝ ՄԿՈՒԶԱԿ-ի լիազորությունների վերանայում և փոփոխված կանոնադրության հաստատում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	-
11. Չափորոշի մշակման մեթոդական ցուցումների մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	Տեղական փորձագիտություն՝ 20 մարդ/օր
12. Չափորոշի մշակման մեթոդական ցուցումների քննարկում ՄԿՈՒԶԱԿ-ի նիստում	ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	ՄԿՈՒԶԱԿ-ի նիստի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ
13. Չափորոշի մշակման մեթոդական ցուցումների՝ որպես պարտադիր կատարման պահանջներ պարունակող փաստաթղթի հաստատում	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
14. Չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգի մշակում	ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	Տեղական փորձագիտություն՝ 20 մարդ/օր
15. Չափորոշիչների փորձարկման և ներդրման կարգի հաստատում	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
16. Չափորոշիչների մշակման ու ներդրման համար պահանջվող մարդկային ռեսուրսների շարունակական զարգացման սկզբունքը՝ համապատասխան իրավական ակտերում ամրագրելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում	ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	-
17. Իրավական ակտերի նախագծերի քննարկում ՄԿՈՒԶԱԿ-ի նիստում	ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	ՄԿՈՒԶԱԿ-ի նիստի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ
18. Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ նախարարությունների հետ	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
19. Իրավական ակտերի նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ ԿԳՆ	2010թ. ընթացքում	-
20. Չափորոշիչներ մշակողների և հաստատությունների անձնակազմի համապատասխան անդամների վերապատրաստման ընթացակարգերի մշակում	ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	-
21. Չափորոշիչներ մշակողների և հաստատությունների անձնակազմի համապատասխան անդամների վերապատրաստման ընթացակարգերի քննարկում ՄԿՈՒԶԱԿ-ի նիստում	ՀՀ ԿԳՆ ՄԿՈՒԶԱԿ	2010թ. ընթացքում	ՄԿՈՒԶԱԿ-ի նիստի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ
22. Չափորոշիչներ մշակողների և հաստատությունների անձնակազմի համապատասխան անդամների վերապատրաստման ընթացակարգերի հաստատում	ԿԳՆ	2010թ. ընթացքում	-

Խնդիր 2. Չափորոշիչների կանոնավոր մշակման գործընթացի ձեռնարկում.

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր, ենթադրություններ
Վերջնական արդյունքներ.			
1. Առկա են չափորոշիչների մշակման ու մասնագիտական փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ	Չափորոշիչները մշակվում և մասնագիտական փորձաքննության են ենթարկվում անհրաժեշտ որակավորում ունեցող փորձագետների կողմից	– Մշակված չափորոշիչների համապատասխանություն սահմանված պահանջներին	
2. Առկա են հաստատված՝ փորձարկման պատրաստ չափորոշիչներ	Ըստ հաստատված մասնագիտությունների՝ չափորոշիչի նախագծերի առկայություն	– Աշխատանքային խմբերի հաշվետվություններ. – Չափորոշիչների նախագծերի վերաբերյալ փորձաքննության եզրակացություններ	
Ուղղակի արդյունքներ.			
1.1. Ընտրված են մասնագիտություններ (որակավորումներ), որոնց համար պետք է մշակվեն չափորոշիչներ	Ընտրված մասնագիտությունների (որակավորումների) ցանկ	– ՄԿՈՒՋԱԽ-ի որոշում ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↑ բոլոր շահագրգիռ կողմերի փոխհամաձայնություն
1.2. Ձևավորված են չափորոշիչների մշակման Աշխատանքային խմբերը	Փորձագետների ցուցակներ՝ ըստ մասնագիտական խմբերի	– ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↓ Մարդկային ռեսուրսների անբավարարություն
1.3. Աշխատանքային խմբերի անդամներն ունակ են մշակել չափորոշիչներ	Վերապատրաստված փորձագետներ	– Դասընթացի ծրագիր – Վերապատրաստողների հետ կնքված պայմանագրեր – Դասընթացին մասնակցության մատյաններ – Վերապատրաստման անցկացման հաշվետվություն	↑ Աշխատանքային խմբերի անդամների կանոնավոր մասնակցություն դասընթացներին ↑ Աշխատանքային խմբերի անդամների՝ դասընթացը լիարժեք յուրացնելու ունակություն
1.4. Գրախոսողներն ունակ են իրականացնել չափորոշիչների նախագծերի մասնագիտական փորձաքննություն	Վերապատրաստված գրախոսողներ	– Դասընթացի ծրագիր – Վերապատրաստողների հետ կնքված պայմանագրեր – Դասընթացին մասնակցության մատյաններ – Վերապատրաստման անցկացման հաշվետվություն	↑ Գրախոսողների կանոնավոր մասնակցություն դասընթացներին ↑ Գրախոսողների՝ դասընթացը լիարժեք յուրացնելու ունակություն

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր, ենթադրություններ
2.1. Մշակված են չափորոշիչների նախագծերը	Չափորոշիչների նախագծերի առկայություն՝ տեխնիկական առաջադրանքով սահմանված տեսքով	– Աշխատանքային խմբերի հաշվետվություններ, դրանց կից նյութեր	↑ Աշխատանքային խմբերի կողմից առաջադրանքը սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով կատարելու ունակություն
2.2. Չափորոշիչների նախագծերն անցել են փորձաքննություն, ստացել են ոլորտային հանձնաժողովների հավանությունը և հաստատված են	Հաստատված չափորոշիչների առկայություն	– Ոլորտային հանձնաժողովների եզրակացություններ – ՄԿՈՒՋԱԿ-ի փորձագիտական եզրակացություններ – ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման	↑ ՄԿՈՒՋԱԿ-ի աշխատակազմի անդամների և փորձագետների բավարար մասնագիտական կարողություններ Ոլորտային հանձնաժողովների կողմից նախագծերի քննարկման ձգձգումներ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Պատասխանատուն	Կատարման ժամկետը	Ռեսուրսները
1. Չափորոշիչների մշակման խորհրդատուների ընտրության սկզբունքների և դրանց կարողությունների նկատմամբ պահանջների մշակում ու հաստատում	ԿԳՆ ՄԿՈՒՋԱԿ	շարունակական	-
2. Չափորոշիչների մշակման խորհրդատուների մրցութային ընտրություն	ԿԳՆ ՄԿՈՒՋԱԿ	շարունակական	-
3. Մասնագիտությունների (որոնց համար պետք է մշակվեն չափորոշիչներ) ընտրության մեխանիզմի մշակում, հաստատում	ՄԿՈՒՋԱԿ ՄԿՈՒՋԱԽ ԿԳՆ	շարունակական	-
4. Մասնագիտությունների (որակավորումների) ընտրություն	ՄԿՈՒՋԱԿ ՄԿՈՒՋԱԽ ԿԳՆ	շարունակական	-
5. Չափորոշիչների մշակման աշխատանքային խմբերի տեխնիկական առաջադրանքի մշակում	ՄԿՈՒՋԱԿ	շարունակական	-
6. Չափորոշիչների մշակման աշխատանքային խմբերի մրցութային ընտրության առաջին փուլի իրականացում	ԿԳՆ ՄԿՈՒՋԱԿ-ի մրցութային հանձնաժողով	շարունակական	-
7. Չափորոշիչների մշակման աշխատանքային խմբերի մրցութային ընտրության երկրորդ փուլի իրականացում	ԿԳՆ ՄԿՈՒՋԱԿ-ի մրցութային հանձնաժողով	շարունակական	-

8. Աշխատանքային խմբերի անդամների վերապատրաստման դասընթացի իրականացում	ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	Դասընթացավարներ՝ 30 մարդ/ժամ՝ յուրաքանչյուր 15 վերապատրաստվողի հաշվարկով. Գրենական պիտույքներ
9. Չափորոշիչների մշակման աշխատանքային խմբերի անդամների հետ պայմանագրի կնքում	ԿԱԻ	շարունակական	-
10. Չափորոշիչների նախագծերի մշակում	Աշխատանքային խմբեր	շարունակական	Յուրաքանչյուր չափորոշիչի համար՝ 30 մարդ/օր
11. Չափորոշիչների նախագծերի մասնագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների (գրախոսողների) ընտրություն	ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
12. Գրախոսողների վերապատրաստման դասընթացի իրականացում	ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	Դասընթացավարներ՝ 30 մարդ/ժամ՝ յուրաքանչյուր 15 վերապատրաստվողի հաշվարկով. Գրենական պիտույքներ
13. Չափորոշիչների նախագծերի մասնագիտական փորձաքննության իրականացում	ՄԿՈՒԶԱԿ փորձագետներ	շարունակական	Յուրաքանչյուր չափորոշիչի համար՝ 9 մարդ/օր
14. Չափորոշիչների նախագծերի լրամշակում	Աշխատանքային խմբեր	շարունակական	ՄԿՈՒԶԱԿ-ի անձնակազմ, Աշխատանքային խմբեր
15. Չափորոշիչների նախագծերի ներկայացում՝ ոլորտային հանձնաժողովներին	ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
16. Չափորոշիչների նախագծերի հաստատում	ԿԳՆ	շարունակական	-

Խնդիր 3. Չափորոշիչների ներդրում, փորձարկում և վերանայում

Վերջնական ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր, ենթադրություններ
Վերջնական արդյունքներ.			
1. Առկա են չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ու իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ	Վերապատրաստված անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ, որոնք ունակ են ուսումնական գործընթացը կազմակերպել և իրականացնել կարողութենամետ չափորոշիչների պահանջներին համապատասխան	- Չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ու իրականացման արդյունքները արձանագրող փաստաթղթեր	
2. Առկա են չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսներ	Քուլեջներն ապահովված են չափորոշիչների պահանջներին համապատասխան անհրաժեշտ նյութական ռեսուրսներով	- Շենքային պայմանների, անհրաժեշտ գույքի և սարքավորումների առկայության մասին փաստաթղթեր	

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր, ենթադրություններ
3. Առկա են չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական ռեսուրսներ	Քուլեջներն ապահովված են չափորոշիչների պահանջներին համապատասխան անհրաժեշտ ուսումնամեթոդական ռեսուրսներով	– Տպագրված (հրատարակված) ուսումնամեթոդական նյութեր	
4. Չափորոշիչները փորձարկված են և առկա են չափորոշիչների կատարելագործման համար անհրաժեշտ փորձարկման արդյունքները	Չափորոշիչների կատարելագործման համար անհրաժեշտ հիմքեր	– Հաշվետվություններ, եզրակացություններ, վերլուծություններ	
Ուղղակի արդյունքներ.			
1.1. Ուսումնական հաստատությունների ղեկավարներն ունակ են կազմակերպել կարողութեամբ չափորոշիչներին պահանջների համապատասխանող ուսումնական գործընթաց	Ուսումնական հաստատությունների վերապատրաստված ղեկավարներ	<ul style="list-style-type: none"> – Դասընթացի ծրագիր – Վերապատրաստողների հետ կնքված պայմանագրեր – Դասընթացին մասնակցության մատյաններ – Վերապատրաստման անցկացման հաշվետվություն 	<p>↑ Ունկնդիրների կանոնավոր մասնակցություն՝ դասընթացներին</p> <p>↑ Ունկնդիրների դասընթացը լիարժեք յուրացնելու ունակություն</p>
1.2. Ուսումնական հաստատությունների դասավանդող անձնակազմն ունակ է իրականացնել չափորոշիչների պահանջներին համապատասխանող ուսումնական գործընթաց և ուսումնառության արդյունքների գնահատում	Ուսումնական հաստատությունների վերապատրաստված դասավանդողներ	<ul style="list-style-type: none"> – Դասընթացի ծրագիր – Վերապատրաստողների հետ կնքված պայմանագրեր – Դասընթացին մասնակցության մատյաններ – Վերապատրաստման անցկացման հաշվետվություն 	<p>↑ Ունկնդիրների կանոնավոր մասնակցություն՝ դասընթացներին</p> <p>↑ Ունկնդիրների դասընթացը լիարժեք յուրացնելու ունակություն</p>
2.1. Առկա է չափորոշիչների պահանջներին համապատասխան իրականացումն ապահովող ուսումնական գույք և սարքավորումներ	Տեղակայված է դասավանդման գործընթացում կիրառվող համապատասխան գույք և սարքավորումներ	<ul style="list-style-type: none"> – Գույքի և սարքավորումների նախապես մշակված մասնագրեր՝ ըստ չափորոշիչների պահանջների. – Գույքի ձեռքբերման պայմանագրեր և հանձնման-ընդունման ակտեր 	<p>↑ Գույքի և սարքավորումների մասնագրերի առկայություն</p> <p>↓ Գույքի և սարքավորումների մատակարարման ձգձգումներ</p>
2.2. Դասավանդող անձնակազմն ունակ է արդյունավետորեն կիրառել ուսումնական գույքն ու սարքավորումները	Դասավանդողներն արդյունավետորեն և ըստ նշանակության կիրառում են ուսումնական գույքն ու սարքավորումները	<ul style="list-style-type: none"> – Սարքավորումների կիրառման վերաբերյալ դասընթացի ծրագիր – Դասընթացին մասնակցության մատյաններ 	<p>↑ Ունկնդիրների կանոնավոր մասնակցություն՝ դասընթացներին</p> <p>↑ Ունկնդիրների դասըն-</p>

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Օբյեկտիվ ստուգման ցուցիչ	Ստուգման միջոց	Ռիսկեր, ենթադրություններ
		– Վերապատրաստման անցկացման հաշվետվություն	թացքը լիարժեք յուրացնելու ունակություն
3.1. Առկա են չափորոշիչների պահանջների իրականացումն ապահովող ուսումնական պլաններ	Մշակված ուսումնական պլաններ	– Հաստատության տնօրենի հրաման. – Ամբիոնների (հանձնաժողովների) նիստերի արձանագրություններ	↓ Ուսումնական պլանների անհամապատասխանություն՝ չափորոշիչների պահանջներին
3.2. Առկա են դասավանդման, ուսումնառության, գնահատման նյութեր, այլ մեթոդական գրականություն	Մշակված նյութեր և տպագրված գրականություն	– Ամբիոնների նիստերի արձանագրություններ – Տպագրված բրոշյուրների, գրքույկների, այլ նյութերի օրինակներ	↓ Տպագրության համար ֆինանսական ռեսուրսների բացակայություն
4.1. Չափորոշիչների պահանջների համաձայն իրականացվել է փորձնական ուսումնական գործընթաց՝ առնվազն մեկ ուսումնական պարբերաշրջան	Չափորոշիչների պահանջների համաձայն կազմակերպված ու իրականացված ուսումնական գործընթաց	– Ուսումնական հաստատությունների համապատասխան փաստաթղթեր	↓ Հաստատության կողմից ոչ բավարար հետևողականության դրսևորում
4.2. Առկա են փորձարկման ընթացքի մասին տեղեկություններ	Փորձարկման ընթացքի վերլուծության, մշակված առաջարկությունների առկայություն	– Հաստատության կողմից մշակված հաշվետվություններ – Այլ շահագրգիռ կողմերի եզրակացություններ և առաջարկություններ	↓ Շահագրգիռ կողմերի հետևողականություն
4.3. Չափորոշիչները լրամշակված են փորձարկման հիման վրա	Լրամշակված չափորոշիչների առկայություն	– ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման լրամշակված չափորոշիչների հաստատման մասին	↓ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի արձակման ձգձգումներ
4.4. Չափորոշիչներն անցել են պարբերական վերանայում	3-4 տարին մեկ անգամ վերանայված չափորոշիչներ	– ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններ	↑ Վերանայման գործընթացի նկատմամբ շահագրգիռ կողմերի պատասխանատու վերաբերմունքը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	Պատասխանատուն	Կատարման ժամկետը	Ռեսուրսները
1. Ուսումնական հաստատությունների ղեկավարների՝ չափորոշիչների պահանջներին համապատասխանող ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ վերապատրաստման իրականացման տեխնիկական առաջադրանքի մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
2. Վերապատրաստման դասընթացավարների ընտրություն, նրանց հետ պայմանագրերի կնքում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
3. Վերապատրաստման դասընթացի ծրագրի մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ Դասընթացավարներ	շարունակական	Դասընթացավարներ Գրեմական պիտույքներ
4. Վերապատրաստման դասընթացի իրականացում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	Դասընթացավարներ Գրեմական պիտույքներ
5. Ուսումնական հաստատությունների դասավանդող անձնակազմի՝ կարողութեամբ չափորոշիչների պահանջներին համապատասխանող ուսումնական գործընթացի իրականացման վերաբերյալ վերապատրաստման իրականացման տեխնիկական առաջադրանքի մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
6. Վերապատրաստման դասընթացավարների ընտրություն, նրանց հետ պայմանագրերի կնքում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
7. Վերապատրաստման դասընթացի ծրագրի մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ Դասընթացավարներ	շարունակական	Դասընթացավարներ՝ Գրեմական պիտույքներ
8. Վերապատրաստման դասընթացի իրականացում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	Դասընթացավարներ Գրեմական պիտույքներ
9. Կարողութեամբ չափորոշիչների պահանջներին համապատասխան իրականացումն ապահովող ձեռքբերվելիք ուսումնական գույքի և սարքավորումների մասնագրերի մշակում	ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ ԿԳՆ	շարունակական	Միջազգային փորձագետ Տեղական փորձագետ
10. Գույքի և սարքավորումների ձեռքբերում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն	ՊԳԳ ԿԳՆ	շարունակական	Գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ
11. Նոր գույք, սարքավորումների կիրառման համար դասավանդող անձնակազմի վերապատրաստման իրականացում	Սարքավորումներ առաքող կազմակերպություններ	շարունակական	Ներառվում է գույքի ձեռքբերման գումարի մեջ
12. Չափորոշիչների պահանջների իրականացումն ապահովող ուսումնական պլանների մշակում	Ուս. հաստատություններ ԿԱԻ ՄԿՈՒԶԱԿ	շարունակական	-
13. Ուսումնառության, գնահատման նյութերի և այլ մեթոդական գրականության մշակում	Ուս. հաստատություններ	շարունակական	Տեղական փորձագետներ

	ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ		
14. Մեթոդական գրականության, այլ նյութերի հրատարակում	ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ	շարունակական	Տեղական փորձագետներ
15. Հաստատություններում համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպում և իրականացում	Ուս. հաստատու- թյուններ ՄԿՈՒՋԱԿ	2010-2012 թթ.	-
16. Փորձարկման ընթացքի մասին հաշվետվությունների մշակում, ներկայացում, վերլուծություն	Ուս. հաստատու- թյուններ ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ Այլ շահագրգիռ կողմեր	2010-2012 թթ.	-
17. Փորձարկման արդյունքների վերջնական ամփոփում	ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ ՄԿՈՒՋԱԽ ԿԳՆ	հուլիս 2012 թ.	-
18. Չափորոշիչների լրամշակում և հաստատում	ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ ԿԳՆ	շարունակական	-
19. Չափորոշիչների պարբերական վերանայման կազմակերպում	ԿԱԻ ՄԿՈՒՋԱԿ ՄԿՈՒՋԱԽ ԿԳՆ	շարունակական	Յուրաքանչյուր չափորոշիչի համար

Բացատրություններ

- 1) Ուսուցիչների մասին նշագրման բացակայությունը նշանակում է, որ տվյալ գործողությունն իրականացվում է պատասխանատու կողմի աշխատակազմը՝ որպես ընթացիկ աշխատանքային գործառույթ:
- 2) Գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները նախատեսվում է հատկացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կամ համապատասխան միջազգային աջակցության ծրագրերի միջոցների հաշվին: